տուաձակեցոյց քաղաքս Բիւզանդիոյ.»։ Սահակ պտրք.ի կարգադրութեամբ Կոլոտ զրկուած է Երուսաղէմ իբր Արոռակալ և վիճիկ 1713 ին, և այս կարգադրութեամբ էր որ, պատմչին ըսածին պէս, «սակաւ ինչ շնչառութիւն եղեւ սրբոյ Տանս այնորիկ»։ Սահակ պտրք. ընդօրինակած է Գէորգ Սկեւռացիին Եսայեայ մեկնութեան գիրքը եւ ընծայած է Ս. Յակոբի վանքին. այդ ձեռագիրը այժմ կը գտնուի Զմմառի վանքի ձեռագիրներու ցուցակագրութեան մէջ. և յիշատակարանն է հետեւեալը. «գիրքս Եսայեայ սբ. մարգարէին մեկնիչ է. զոր գրեալ ետուր տէր Իսահակ վրդն. և երջանիկ պատրիարք քրիստոնէական Աթոռոյս Երուսաղէմի եւ կ. պօլսոյ ի արդեանց իւրոց, խնդրի ուրեմն ընթերցողայդ տալ զողորմի վերոգրեալ մեծի վեհին եւ ամենայն արեանառու մերձաւորաց իւրոց։ Եւ արդ եղեալ եղև գիրքս ի յիշատակ սրբոյն Յակոբայ ձեռամբ Սարգիս սարկաւագին և ծրեալ եղև փոքր (բառ մը չի կարդացուիր) հրամանաւ նոյնոյ վեհին. մհտ. Յօհան Զէլէպուն. ՌՃԿԱ (=1712) թուին և օգոստ. եչ. Յովհաննէս.» (Յուց. Զմմառի, Թ. 388, անտիպ)։ Իսկ Ս. Յակոբի նուիրած իր յիշատակներու մասին տեսնել (ՄՁ. Թ. 532)։

ՍԱՀԱԿ ՎԱՆՑԻ.— 1879 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, որուն կը նուիրէ յիսուն օսմ. ոսկի, նոյն գումարը վանական վարչութիւնը կը յատկացնէ Յոպպէի վարժ.ի շինութեան և կը հաստատէ նոյն վարժարանին վրայ յիշատակարան մը. (Արձագր. Տն ժողով. 1883, էջ 406)։

ՍԱՀԱԿ ՎՐԴ. ԱԼԱՇԿԵՐՏՑԻ.— Մբ. Զռ. 1801 ին։

ՍԱՀԱԿ ՎՐԴ. ԱԼԱՇԿԵՐՏՑԻ.— Մբ. Զռ. 1817 ին։

ՍԱՀԱԿ ՎՐԴ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ, ԲԱԲԵՐԴՑԻ.— Մբ. աշկ. Սահակ վրդ. Գալատացիին, որուն ընկերացած էր Հնդկաստան նուիրակութեան երթալուն. աւագանի անունը Սարգիս. Զռ. 1849 ին. Փկե. (1858—1864). պտրք. Տեղապահ 1860 ին. 1860 ին Ազգ. վարչութեան և Ս. Յակոբի Միաբանութեան միջեւ ծագած ներսեն-դրսեն խնդիրներուն առթիւ, ձեռք կը բերէ Հանձնի պատմութեան մէջ յիշուած նզովքները հաստատող Մատթէոս կթղ.ի 1861 ի սեպտ. 1 և համար 455 կոնդա-